

2875

Անթ. Զենեցյան
Կապեժի Կրկինը -
սկսւոյ 1911

891.99

S-45

XVI, m.

15X

391.39

2035
-6 NOV 2011

Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԳԵԱՆ

այ. Հայրն Անթուհի
ԿԵԱՆՔԻ
Հրդեհակայ

ԿԱԼԵՅԴՈՍԱԿՈՊ

(ՏԵՏՐԱԿ Ա.) 1912թ. XII-10

100
1064

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1) ԹԱՄԱՐՁԵՆԻ ԶԵՐԻՆՍԱՐԸՆ (ՆԱՄԱԿ)
- 2) ԽՄԲԱԴԻՐԱԿԸՆ ՄԱՏԻՏ (ՆԱՄԱԿՆԵՐ)
- 3) ԿԵՅՑԻՒ ՄԱՏՐԸ... (ՆԱՄԱԿՆԵՐ)
- 4) ԶԵՐԻՍՏՈՈ ՆԱՐԵՆԸ, ԹԱԼԻԿՈ ՋԱՆ...



Թ Ի Յ Լ Ի Ս

ԹԱՄԱՄՅԵՒԻ ՔԱՐԻԱՆ- ՍԱՐԱՆ

Հաշտական Առնեանի համակը տիկին Ադնա-
տուրեանին.

— 0 —

Տիկին,

... Սրտիս ամբողջ ուժով անիծում եմ
այն ըրպէն, երբ մենք ծանօթացանք ի-
րար հետ. մեր բանկում—յիշում էք: Այդ
առաջին անգամը չէր, որ դուք մեր բանկն
էիք գալիս «գործերով, թէպէտ յետոյ, ձեզ
հետ մօտիկ ծանօթանալով, ես համոզւեցի
որ դուք կարող էիք անձամբ չգալ այդ
«գործերով»... Դուք, ճ, ես իմ նաւերս
այրում եմ, դուք, տիկին, մեր բանկն
էիք գալիս աւելի շուտ ձեր հրապոյրները
քան թէ ձեր փողերը տեղաւորելու. ու
այս մասում, կարող եմ ասել, դուք ցոյց
տւիք կապիտալիստի մեծ ընդունակու-
թիւններ. դուք չբաւականացաք մէկի հետ
«գործ» սկսելով, լաւ իմանալով քաղա-
քատնտեսական այն իմաստութիւնը, որի
շնորհիւ, վերջնական սնանկութեան ա-

ինձ օգնութեան եկաք... Դուք խղեցիր
իմ հարևան Սուրաթեանի հետ ու դադա-
րեցիք ձեր փողերը ընթացիկ հաշուով տա-
լուց, լաւ համարելով ինձ հետ գործ ունե-
նալ, խաղատոմսեր գնելով: Մի օր, անիծւի
այդ օրը, անսպասելի կերպով մօտեցաք
իմ գրասեղանիս, խաղաթղթերի կուրսերն
իմանալու, և, երբ ես ձեզ առաջարկում էի
կուրսերի ցուցակը, մեր ձեռքերն իրար
հանդիպեցին... Այդ ձեռքը, փոքրիկ, ատ-
լասէ ձեր այդ ձեռքը ինձ էլքառականա-
ցրեց, ու ես հաւասարակշռութիւնս ար-
դէն կորցնում էի, երբ Սուրաթեանը զու-
նատ մօտեցաւ սեղանիս, մի ինչ որ թուղթ
վերցնելու պատրւակով... Նա ուզում էր
խանգարել մեզ. դուք այդ հասկացաք ու,
կամենալով մի անգամից ոչնչացնել նրան,
ձեր բեղիկիւղից հանեցիք երեք հատ հա-
րիւրանոց ու յանձնելով ինձ, խնդրեցիք
ձեզ համար երկրորդ փոխառութեան մի
խաղատոմս գնել... Փողը գնելով առաջ,
դուք հեռացաք բանկից յուզւած, խոստո-
նալով տոմսակի համար վաղը գալ: Ան-
ցաւ վաղը, միւս օրը, երկու, երեք օր,

մի շաբաթ, և դուք չէիք գալիս... Չգի-
տեմ աւելի պարտքս կատարելու համար,
թէ՞ այն ատլասէ ձեռքի էլքերտրականու-
թիւնից խթւած, ես վճռեցի ձեր բնակա-
րանը գալ, խաղատոմսն ու աւելացած
փողը ձեզ յանձնելու... Դուք ինձ ընդու-
նեցիք ու առանց խօսք անգամ ասելու
խաղատոմսի մասին, ցանկացաք իմանալ,
թէ ոովորե՞լ եմ ես արդեօք Ներսիսեան
դպրոցում: Այդ հարցը ինձ շփոթեցրեց,
որովհետեւ ես այն հասկացայ իբրեւ մի
ակնարկ իմ ամաչկոտութեան, իմ «վայ-
րենիութեան» մասին: Կորսյ, մտածեցի
ես: Դուք, ձեռքիցս բռնելով, «կարեկցա-
բար» նստեցրիք ինձ բազկաթոռի վրայ
ու, ձեր տարօրինակ հարցն արդարացնելու
համար, մեկնեցիք ինձ մի թղթի կտոր,
կարդալու.

«Ինչպէս Ներսիսեան դպրոցն աւարտող,

Խորշում է նա միշտ կանանց շրջանից,

Բայց երազումը սէր արտայայտող

Խօսք չէ խնայում օրիորդներէց»:

Ստորագրած էր. — de Surat. այդ Սու-
րաթեանն էր:

Այս էպիգրամով, որ նա ուղարկել էր

ձեր անունով, երկու նպատակ ունէր. մի-
նը, ձեզ խայթելու, միւսը, ինձ վարկա-
բեկ անելու: Ստոր, ստոր բանկիր, որ
այդպիսի միջոցներով ես կուում. ու եթէ
այդ բոլորին այդ նենգ de Surat-ը առաջ
լինէր, ես նրան կտոր-կտոր կանէի...

Ծնորհիւ ձեր ցոյց տւած «կարեկցու-
թեան», կատաղութիւնս հետզհետէ անց-
նում էր, ու «Ներսիսեան դպրոցն աւար-
տողի» երազները սկսում էին իրականու-
թեան սահմանները մտնել: Ես սկսեցի
ձեզ սիրաշահել, ու մենք մի ժամից յե-
տոյ արդէն բարեկամներ էինք... Բաժան-
ւելու ըստէն դուք ուզեցաք իմանալ իմ
կարծիքը ձեր կաղնեգոյն նոր կօշիկների
մասին ու, ոտքներդ առաջ դնելով, հար-
ցրիք ինձ. «հաւանում էք նոր կօշիկներս»:
Պատասխան. «ես հաւանում եմ ոտքը»:
«Մերժում եմ ոտքը, ահա ձեզ ձեռքը»:
Կնոջ մօտ ամեն բան թարս է. տղամարդը,
մէկին անպատեւելու համար, առաջարկում
է իր ոտքը, կինը իր ոտքը տալիս է մէ-
կին այն ժամանակ, երբ ուզում է ընդ-
գծել իր հաճոյքը դէպի այդ մէկը. կնոջ

ոտքը հաւասար է տղամարդու ձեռքին...
Ահ, այս պարագօքսները... Ձեր «մեր-
ժումը», սակայն, ինձ թեք տւեց: Նախ.
հի է մերժում մի բան, որ նրանից չեն
խնդրել: Պատասխան. նա, որ ուզում է
տալ այդ չխնդրած բանը: Շեշտելով ձեր
յիրաւի չքնաղ ոտքի գեղեցկութիւնը, ես
ամենաշատը սպասում էի ձեր դէմքի վրայ
կուսական կարմրութիւն. այդ իմ յաջո-
ղութեան առաջին էտապը պիտի լինէր,
որին պիտի հետեւէին երկրորդը, երրոր-
դը... Բայց դուք այդ գողարիկ ոտքի տա-
լու կամ չտալու հարցը դրիք ու այդպի-
սով «իրերի ընթացքն արագացրիք», ինչ-
պէս ասում են քաղաքագէտները: Ես ա-
ռայ ձեր ձեռքը ու, առաջներդ չոքելով,
դատարկեցի սիրտս, ուզում էի ասել
«բանկա»,—անկեղծութեամբ, առանց յե-
տին մտքերի, որովհետեւ ես ձեզ սիրում
էի յիրաւի—ու ամուսնութեան առաջար-
կութիւն արի: Դուք իմ բերանը փակե-
ցիք ձեր ատլասէ փոքրիկ ձեռքով ու լսել
անգամ չէիք ուզում դրա մասին, մէջ բե-
րելով ձեր ամուսնու «թարմ» գերեզմանը:

Չնայելով ձեր մերժումին, «Թարմ» բառը այս — «իրերի արագացած տեմպով ընթանալու» — պայմաններում փոքրիկ արդելք էր ներկայանում ինձ: Թարմ, բայց թարմը շուտով կը հնանայ, ու կը դառնայ այն բուսական, երբ սա իմս կը լինի, մտածում էի ես, ոգևորված քայլերով դէպի իմ բնակարանը դիմելով ու խորհելով այն միջոցների մասին, որոնք կարող էին էլ աւելի արագացնել գերեզմանի «հնանալը»...

Միւս օրն և եթ ես ձեզ մօտ վազեցի առանց դժարանալու, մանաւանդ որ պատճառ կար. ես սրտիս զեղմունքների մէջ խեղդել էի անիծւած մետաղի հարցը. ձեր խաղատումսը ֆնացել էր ինձ մօտ: Դուք հասկացաք իմ հայցողական հայեացքի նշանակութիւնը ու մեկնեցիք ձեր թաւշէ ձեռքը դէպի իմ շրթունքները... Ես կրկնեցի իմ առաջարկութիւնը: Ձեր վճիռն անդրդեւի էր. ոչ և ոչ: Ու այսպէս մի ամբողջ շաբաթ. ոչ և ոչ: Եւ այս ոչ թէ այն պատճառով, որ դուք ինձ չէիք հաւանում, այլ... «չուզեցաւ» ինձ տեսնել ամուսնու թշուառ վիճակի մէջ» — եղ-

ջիւրներով... Տարւած լինելով ամբողջովին, ես չէի կարող հասկանալ ու զգալ, որ ագիւլտերը փառաբանող այդ «ցինիկ կարեկցութեամբ» — պարսպօքսներ — փչացածութեան սահմանը սպառնւած է: Բայց դուք կրում էք ժամանակի բոլոր նշանները. դուք ձեր ցինիկութեան մէջ էլ աւելի անվեհեր էիք. դուք ասում էիք, որ «ինձ սիրելով» պատրաստ էք ուրիշի նախատր եղջիրներով զարդարողի պաշտօնը տալ ինձ:

Իմ «առաքինութիւնը» խորտակեց. ես ձեր սիրականը դարձայ...

Այս բանը չէր կարող աննկատելի անցնել բանկում. ինձ պատրաստ էին ուտելու... ամենից շատ Սուրաթեանը:

Հալածանքը հետզհետէ ակնարկների շրջանից անցնում էր ուղիղ ու որոշ վերաւորանքների.

— Այլի «կովը» այլեւս բանկ չի գալիս... դրանում դուք էք մեղաւոր, պ. Սուրաթեան...

— Ինչո՞ւ ես և ոչ ազան «հորթերը»...

Եւ այլն և այլն... Ու այսպէս—երեք չորս ամիս:

Ես կարողացայ այդ վիրաւորանքներն նայել բարձրից, խղճալով այդ նախանձոտ սրտերի փոքրութիւնը:

Թշնամիներս սակայն վճռել էին կրօնել ամեն միջոցներով:

Անցեալ շաբաթ բանի գալով, ես դտայ իմ գրասեղանիս վրայ մի թղթի կտոր, որ պարունակում էր «ձեր երկրպագուներին» անունները յաջորդաբար. լակէյ Սօլօմօն, բժիշկ Հոգեհանեան, Կօստա-Գիդեցիկ, de Surat և Կս-Լեոնեանս: Այդ բոլորն այդ ցուցակը իմ աչքում մի ստոր բամբասանք էր ձեր հասցէին, ու այդ պատճառով վճռեցի հէնց նոյն երեկոյն վերսկսել իմ արշաւանքս ձեր յամառութիւնը կոտրելու ու համոզելու ձեզ վերջապէս ինձ հետ ամուսնանալ: Դուք միշտ մերժում էիք... Վերջապէս ես վերջին ու ծայրայեղ միջոցին դիմեցի, հաղորդելով ձեզ «ցուցակի» պատմութիւնը և այն ձեզ տալով... Դժւար, դուք գունատ ընկաք բազկաթողի վրայ... Միամիտս

այդ ուշաթափութիւնը բացատրեցի ստացած վիրաւորանքի ծանրութիւնով, ուստի ես ձեզ փաղաքշում ու յուսադրում էի... Վերջապէս ես հեռացայ, վճռելով իմ արշաւանքս շարունակել վաղաւեից, ձեր անունը մաքրելու միակ նպատակով: Այդ վաղը բերեց ինձ մի ուրիշ տոմսակ. «Եթէ դուք երկու օրւայ ընթացքում չէք վերադարձնի այրու երեք հարիւր բուլլին, ձեր վարմունքի մասին մենք կըյայտենք բանի կառավարչին»: Ալֆօնսութեան ողորմելի ասպիրանտներ... Նրանք չըզիտէին, որ ես ձեզ հետ վերջացրել էի երեք հարիւր բուլլու հաշիւը. դուք ստացել էիք խաղատումը և աւելացած փողը: Այս վիժւած շանտաժը սակայն ինձ շատ զւարճացրեց և նոյն երեկոյն ես վազեցի դէպի ձեր բնակարանը, զաւեշտական տրամադրութեանս ձեզ էլ մասնակից անելու նպատակով... Յուսախաբութիւն... Դուք «հիւանդ էիք»: Այս «պաշտօնականութիւնից» ես հասկացայ, որ մենք այդ օրւանից օտարներ ենք... Բայց այստեղից հետեցնել, թէ դուք նորից բարեկամա-

ցել» էք Սուրաթեանի հետ, ենթադրելով նրա ստոր շննտաժին, դա կըլինէր կատարեալ խելագարութիւն... Սակայն այդ այդպէս էր, որովհետեւ դուք այնուհետեւ դադարեցիք խաղատոմսեր գնել և սկսեցիք ձեր փողերը ընթացիկ հաշուով տալ... Ուրեմն...

Ուրեմն դուք վախեցաք «ցուցակից», ուրեմն այդ «ցուցակը» Սուրաթեանի ֆանտազիան չէր, ուրեմն դուք անկեղծ չէիք, երբ ձեր ամուսնու «թարմ» գերեզմանն էիք մէջ տեղ բերում. դուք ուրեմն ստում էիք, հաւատացնելով ինձ, թէ ձեր սիրտը փակ է եղել միշտ «օտարների» համար, թէ ես միակն էի, որ կարողացայ թափանցել այնտեղ... Օ՛, ձեր սիրտը... Այնտեղ եղել են լակէյ Սօլօմօն, բժիշկ Հոգեհանեան, Կօստա-Գեղեցիկ, de Surat... Եղել են, եղել. գուցէ և միաժամանակ... Եղել են և դուք են եղել... կըլինեն այնտեղ և ուրիշները... Օ՛, ձեր սիրտը, տիկին... ձեր սիրտը թամաշեւի քարանասրան է...



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԻՏ

ԿԱՄ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԻՆ

I

Տիկին Զախմախսագեանի նամակը բացկի կառավարիչ Արեւմ Բաայի Փոլագեանին:

Յարգելի Արտեմ Իսայիչ,

Յանուն Ձեր և հօրս հին բարեկամութեան դիմում եմ Ձեզ ու արդար դատաստան խնդրում այն անպատշաճ վարմունքի համար, որ թոյլ տուեց երեկ Ձեր խնամքին յանձնաւծ բանկում ծառայող հաշւապահ ճուղուրեանը իմ վերաբերմամբ: Զգիտեմ թէ ինչ իրաւունքով և ում թոյլտուութեամբ այդ պարոնին տուել են խմբագրական երկար, արշինանոց մատիտ, որը նա գործ է ածում ոչ այնքան զրելու, որքան... բանկի հետ գործ ունեցող կանանց ձեռքերին խփելու համար. նա կարող է այդպիսի կատակներ անել իր կողքին նստող բեմինգտօնիստկայի հետ, բայց երբէք ինձ հետ...

Ձեր բանկի շահերը, յարգելի Արտեմ
Իսանյիչ, պահանջում են, որ զանազան
նորարոյս հաշւապահներ յարգանքով վե-
րաբերեն զէպի այն կապերը, որոնք հօրս
կենդանութեան ժամանակից հաստատուել
են Ձեր բանկի և մեր ընտանիքի միջև:
Ես այդ պատանու մտքինը հասկա-
նում եմ... բայց իմ սիրտս գտնւում է
այն հողակոյտի տակ, որտեղ փտում են
իմ անմոռանալի և անդին ամուսնու ոս-
կորները...

Ընդունեցէք և այլն

Անսխիթար այլի Չախմախսագեան,
Բանկի կառավարչի մակագրութիւնը

Աւագ հաշւապահ Չիլիկեանին: Խել
անմիջապէս հաշւապահ Ճուղուրեանից եր-
կար մատիտը և ներկայացնել ինձ. իս-
պառ արգելել այդպիսիների գործադրու-
թիւնը:

Ա. Փոլադեան

II

Աւագ հաշւապահ Չիլիկեանի գե-
կուցումը բանկի կառավարիչ Արեւմ
Իսանյի Փոլադեանին:

Ձեր կարգադրութեան համաձայն ես

պ. Ճուղուրեանին շնորհակալ եմ, որ այսու-
հետեւ կարճ մատիտով գրի եմ գալիս
սակայն յաջողութիւն չունեցաւ, որովհե-
տեւ պ. Ճուղուրեանը հարցը կապում է
մարդկային արժանապատուութեան զգաց-
մունքի հետ և Ձեր կարգադրութիւնը հա-
մարում վերաւորական ոչ միայն իր, այլև
բանկի բոլոր ծառայողների համար, որոն-
ցից մի քանիսը յիշաւի համաձայն են
նրա հետ: Ոմանք էլ այն կարծիքի են,—
և սրանց պարագլուխը մեր ծերունի կօր-
բնապօնդէնտն է, պ. Հոգեւորքեանը,— թէ
մատիտը անմիջապէս պիտի խլել, որով-
հետեւ պ. Ճուղուրեանը այդ երկար մա-
տիտը գնել է, իբր թէ, ուրիշներից որոշ-
ւելու համար, կանանց ուշադրութիւնը իր
վրայ դարձնելու նպատակով: Երկար մա-
տիտը մնաց պ. Ճուղուրեանի ձեռքին. և
ոչ միայն այդ. նրա համակրողները որո-
շել են վաղւանից հետները բերել մի-մի
երկար մատիտ... Եթէ խլրտումն այսպէս
շարունակւի, բանկում պարապելն ան-
հնարին կը դառնայ... Ինչ որ վերաբե-
րում է մատիտով տիկին Չախմախսա-

1001
1002

գեանի ձեռքին խփելուն, պ. Ճուղուրեանը այդ բանը վերադրում է պատահականութեանը: Նա չի մերժում, որ ինքը շատ հաւանում է, նոյն իսկ սիրում է, և այն, «ծեծւած շան» պէս, ինչպէս մեր կօրրեսպօնդենտ Հոգևարքեանն է ասում, տիկին Չախմախսազեանին, բայց դրանից հետեւեցնել, թէ նա դիտմամբ է երկար մատիտով խփել տիկնոջ ձեռքին, դա, իրեն Ճուղուրեանի և իր կուսակցութեան կարծիքով, կըլինէր արսուրդ: Ազդւած լինելով յարգելի տիկնոջ գեղեցկութիւնից, նա ակամայ ձեռքից վայր է գցել մատիտը, որի ծայրը և դիպել է տիկնոջ ձեռքին, երբ սա ընդունելիս է եղել մի ստացական: Այսպէս բացատրում է պ. Ճուղուրեանը: Կօրրեսպօնդենտ Հոգևարքեանը, ընդհակառակը, պնդում է, որ հարւածը դիտմամբ է հասցրած: Իմ առաջը այսպիսով դրած էր մատիտի երկու ծայրի զրութիւնը որոշելու հարցը. այսինքն հարկաւոր էր պարզել, թէ արդեօք զըժբախտութեան մօմենտին, այսինքն այն ընթացքին, երբ մատիտի սուր ծայրը տիկնոջ

ձեռքի վրայ էր, ճիշտից էր գտնուում նրա բութ ծայրը. պ. Ճուղուրեանի ձեռքում, թէ սեղանի վրայ... Այս դժւար հարցն էր, որ ես չկարողացայ պարզել, որովհետեւ ծառայողների ցուցմունքներն այս մասին միմեանց հակասում են: Հարցը, միւս կողմից, բարդւում է հաշւապահներից մէկի, պ. Հոգևարքեանի որդու ուղղակի դժւարամարս ցուցմունքով: Սրդ, նա հաւատացնում է, որ պ. Ճուղուրեանը սովորութիւն ունի բանկը յաճախող կանանց հետ, բայց մասնաւոր տիկին Չախմախսազեանի հետ, աչքերով սիրախօսութիւն անելու: Ահա այդպիսի բոպէսներից մէկին յարգելի տիկինը, համբերութիւնից դուրս գալով, մօտենում է պ. Ճուղուրեանին, սրան ապտակելու մտքով. սա պաշտպանւում է մատիտով, որը կօրրեսպօնդենտ Հոգևարքեանի ասելով, նոյն իսկ ճանկոտ է տիկնոջ ձեռքը... Այս ցուցմունքը ես համարում եմ տենդենցիօզ, որովհետեւ իմ խորին համոզմունքով մատիտով ապտակից պաշտպանւել չի կարելի: Հարկ եմ համարում աւելացնել, որ կօր-

րեսպոնդենտ Հոգեւորքեանը տ. Չախմախ-
սաղեանին համարում է հաշւապահ Հոգե-
ւորքեանի հարսնացու... Ես չգիտեմ, թէ
արդեօք յայանի՞նք է այդ բանը տիկնոջը,
թէ ոչ... Այս կասեմ միայն, որ պատա-
հած թիւրիմացութիւնը վերացնելու հա-
մար, միակ միջոցը, իմ կարծիքով, պ.
Ճուղուրեանին տ. Չախմախսաղեանի հետ
ամուսնացնելն է... Վերին ասացի, որ պ.
Ճուղուրեանին ինքը խոստովանում է, որ
սիրում է տիկնոջը. այժմ էլ կասեմ, որ
տիկինն էլ անտարբեր չէ դէպի պ. Ճու-
ղուրեանը, այդ երևում է նրանից, որ
յարգելի տիկինը իր նամակում յիշում է
պ. Ճուղուրեանի կողքին նստող բեմինգ-
տօնիստկային. իմ կարծիքով յաջողու-
թեան ճանապարհում այս հանգամանքը
մեծ քայլ է. կնոջ դրածը պիտի տողերի
միջով կարդալ... Մէ բոլոր ընդունենք, որ
ես սխալում եմ. այդ դէպքում իսկ ան-
յաջողութեան մասին խօսելը դեռ շուտ
կըլինէր, որովհետեւ իւր մի քաղաքատըն-
տեսական միջոց, որ ցոյց է տւել դեռ Ա-
դամ Սմիտը, այսինքն թէ, մի ապրանք

ծախելու համար, պիտի շահագրգռել դի-
մացի մարդուն. ես վերցնում եմ տ. Չախ-
մախսաղեանին շահագրգռելու գործը ինձ
վրայ... Այլապէս սկանդալը փակել ան-
հնար է...

Ընդունեցէք խորին յարգանքս

Չիլիկեան—աւագ հաշւապահ

Բանկի կառավարչի մականգրութիւնը

Թո՛ղ պ. աւագ հաշւապահը փիլիսո-
փայէ մի օր և մի գիշեր... զբանով նա
միայն ցոյց կըտայ, որ քաղաքատնտե-
սական գլխաւոր օրէնքը մոռացել է. այն,
թէ ժամանակը արծաթ է: Բանկի աւագ
հաշւապահին վայել չէ միջնորդութեամբ
պարապել, իսկ բանկը չի կարելի հարս-
նացուների շուկայ դարձնել: Խել պ. Ճու-
ղուրեանից խմբագրական մատիտը և ա-
ռաջարկել նրան ձեռք բերել սե ազ-
նոց աչքերով սիրտխօսութեանը վերջ
տալու համար: Պ. աւագ հաշւապահին
խնդրում եմ այս հարցը փակած համա-
րել: Ա. Փոլադեան:

III

Տ. Զախմախսազեանի եւ պ. ձու-
ղուհեանի նամակը բանկի կառավա-
րից Արեւմ Իսայիչ Փոլադեանին

Մեծարգոյ Արտեմ Իսայիչ,
Երկուսով մի հոգի եւ մի մարմին զառ-
նալուց առաջ, ներողութիւն ենք խնդրում
Ձեզանից, Ձեզ պատճառած անհանգստու-
թեան համար: Մեկաչոր խնդրում ենք
Ձեր հայրական օրհնութիւնը: Մեր պսա-
կի հանգէսը նշանակւած է վաղւան հա-
մար, որին խնդրում ենք Ձեզ ներկայ
գտնել: սկիզբը—երեկոյեան տասը ժա-
մին, մեր նոր բնակարանում, որ գտնուում
է...

Ընդունեցէք մեր անկեղծ յարգանքը
Ճողորեան-Զախմախսազեան
Բանկի կառավարչի մակագրութիւնը

Աւագ հաշւապահ պ. Զիլիկեանին:
Այսպիսի բան քաղաքատնտեսութեան մէջ
ես չեմ կարդացել: Տարօրինակ կին... Ա.
Փոլադեան:



ԿԵՅՅԷՄԱՅՐԸ...

— 0 —

I

Արշակ Մարալեանի նամակը
տիկին Նունէ Պատնակաճեանին:

Իմ անգին բարեկամ, Նունէ,

Կրկնում եմ.—ՆՈՒՆԷ... Ու եթէ այս
առաջին, դէպի քեզ ուղղածս, ղուն յանդ-
նութիւն համարւի իմ կողմից, ինձ չը-
դատապարտես, որովհետեւ ես կարօտ եմ
կարեկցական ուշադրութեան, քո ուշա-
դրութեանը, ՆՈՒՆԷ... Յիշիր մի ըսպէ,
թէ տարիներով գուրգուրած ու խնամած
զգացմունքը, որ այս ըսպէիս լցնում է
իմ սիրտը, իր ելքն է պահանջում, որո-
նում է իր առարկան, ու մահւան շղթա-
ները միայն կարող են նրա առնական
կորովը յաղթահարել...

Ծածուկ չէ, որ դու գիտես իմ ձրգ-
տումս դեպի քեզ, մեր ծանօթանալու հէնց
առաջին ամիսներից, բայց մանաւանդ
սրանից տաս տարի առաջ, քո ամուսնու
եւ իմ ընկերոջ կենդանութեան ժամանակ,
ջրաղացի մօտ պատահած դէպքից յետոյ:
Եիշում ես: Մայիսի այն պայծառ երեկո-
յին, ես մի փոքր ուշանալով մեր սովո-

բական, անմոռնչ համաձայնութեամբ
ընտրած զբոսանքի տեղը գալու, դու մե-
նակ նստել էիր փոստային ճանապարհի
մի կողմում, ջրաղացի կողքին ընկած գե-
րաններից մինի վրայ ու նայում էիր դէ-
պի գետի միւս ափը, սարին, անհանգըս-
տութեամբ դիտելով նրա յետեից բարձ-
րացող ամպերի կոյաը, որոնք պիտի որ
քեզ վախեցնելիս լինէին, որովհետեւ դու,
մի քանի անգամ բանալով հովանոցդ, աչ-
քերով հափում էիր նրա մեծութիւնը: Քո
այդ շփոթութեան մէջ դու այնքան թո-
վիչ, այնքան չքնազ էիր, որ ես պատ-
րաստ էի ժամերով դիտելու քեզ այդ
դրութեան մէջ, եթէ դու համբերութիւ-
նից չդուրս գայիր ու այս ու այն կողմը
չնայէիր: Մեր հայեացքներն իրար հան-
դիպեցին և ես ստիպւած էի դուրս դա-
լու ճանապարհը ծռելու տեղի ժառի յե-
տեից: Ես հարկ համարեցի ներողութիւն
խնդրել ուշանալուն համար. դու այդ նե-
րողութիւնը անտեղի համարեցիր և աշ-
խատում էիր վիրաւորւած ճեւառակ, նե-
րիր, նունէ, հաւատացնելով, թէ դու ինձ

չէիր էլ սպասում... Դու ինձ այսպիսով
շփոթեցրիր, թեւիս քար խիեցիր... Բայց
անձրևի սռալին կաթիլներն օգնեցին
ինձ. դու սկսեցիր անհանգստանալ նոր
զլխարկիդ համար, որովհետեւ, քիչ առաջ
կատարածդ փորձերի պատճառով, հոլա-
նոցիդ զսպանակը թուլացել էր և դու,
զինաթափւած չէիր իմանում ինչ անել...
Վերջապէս կարծելով, թէ հնարը գտել
ես, դու հանեցիր թաշկինակդ և տար-
ծեցիր զլիւիդ վրայ, բայց նա փոքր էր,
ու հնարագիտութիւնդ քեզ անգամ ծիծա-
ղելի թւաց... Մի անգամ յոնքդ բացւած,
ես իմ ծառայութիւնս առաջարկեցի. դու
համաձայնեցիր վերջապէս զխարկդ ինձ
յանձնելու և երկուսիս թաշկինակները ի-
րար կապելու ու գլուխդ ծածկելու. իսկ
երբ իմ վերարկւից քո անպէտքացած
հովանոցի միջոցով զխարկիդ համար մի
վրան յօրինեցի, մենք բոլորովին հաշ-
տեցինք ու հնարներ էինք որոնում ա-
զատելու անձրևից, որ, հետզհետէ յոր-
դանալով, մեր ոտքերի տակ լճեր էր դո-
յացրել: Դու, մինչև ոսկորները թրջւած,
ամբողջ մարմնով տերևի պէս դողում էիր
եւ պատրաստ էի քեզ ուսիս դնելու և
այդպէս քաղաք հասցնելու. բայց չէի հա-
մարձակուում... Վերջապէս, թե թեւ տաւ,

մենք սկսեցինք քայլել լճերի միջով... Բաղդը սակայն ժպտաց մեզ ու մենք կարող էինք հովանաւորել մի դուրս պլըծած քարափի տակ... Առանց երկար մըտածելու, համարեա ինստինկտով, քեզ գիրկս առայ ու ճղեցի մի խոր լիճ. մենք ապահով տեղ էինք, սղմած մի փոքրիկ տարածութեան վրայ. կողք կողքի, թե թեի տւած... ու այդ ըոպէին ես ինձ ամենաթշուառ մարդն էի համարում, որովհետեւ, նունէ, դու, ինձ կպած, ուրիշին էիր պատկանում, դու կապւած էիր պարտաւորութիւններով...

Ու եթէ այբիանալուցդ առաջ, շատ յաճախ պատահելով քեզ հետ, ես աշխատել եմ այդպէս զսպելու իմ ձգտումը դէպի քեզ, դրա պատճառը... դրա պատճառը միայն և միայն քո պատուականութիւնը, քո անբիծ մաքրութիւնն է եղել, որի առաջ պիտի խորտակէին ընտանիքի սրբութեան և անբաժանութեան դէմ ուղղած ամենատեսակ փորձեր... Դրա պատճառը, գործածելով քո սիրած դարձւածքը, դարերի սրբագործած պարտաւորութեան

կատարելու անդառնալի վճիռդ էր... Այս ըոպէիս էլ ես յիշում եմ այն առանձին շեշտերը, որ դու դնում էիր, ամուսինների հաւատարիմ կենակցութեան մասին ճանելիս, որոշ-որոշ, իւրաքանչիւր բառի վրայ, երբ մենք ձմեռւայ երեկոններին քո ամուսնու հետ վճռել էիք տքնում համաշխարհային կարծիքը յուզող կնճռոտ հարցերը... Դու ասում էիր. «Ամուսնական կեանքը, ընտանիքը, չըպիտի ճանաչէ ես. ընտանիքում հալւում են բոլոր նսերը և առանձին կամքերը»...

Գաւառական «արիստոկրատիայի» շըրջանում դու տյդ մասում կազմում էիր եզակի բացառութիւն. ու, չնայելով «մօզային արլաների» բոյկոտին, դու հզօր էիր քո միայնակեցութեան մէջ...

Այդ շեշտերը... Որքան շփոթում էին նրանք այն ժամանակ քսաներեք տարեկան երիտասարդիս, որ կարծում էր, թէ նրանք ուղղւած էին իր ազատախօսութիւնների, ազատ միտումների դէմ... Ու այժմ, տաս տարուց յետոյ, մտածելով այդ շեշտերի մասին, ես ստիպւած եմ յիշելու առածը թէ. «գող—սիրտը գող»... Ճիշդ է՞, որ քո նետերի կէտ-նպատակը ես չէի ու որ նրանք երբեմնապէս ծակում էին ինձ, որովհետեւ ես ինքս էի նրանց դէմ

կանգնում: Թող, որ նրանք ոսկեզօծած դռնը դեղահատներ էին, որ դու առաջարկում էիր քո ազատասէր ամուսնուն. այն էլ ծածուկ չէ ինձ համար, որ այդ շեշտերը քո գէպի ինձ ունեցած ձգտումը զսպելու համար էին այնքան ուժեղ, այնքան հնչուն... Ո՛հ, ես արդէն չստեղծում աստղի, Նունէ. ծնկաչոք խնդրում եմ ներիւր ինձ այս քաղցր... Երազը, եթէ յիշուի աստեղծներն այնքան ժլատ են...

Բայց ես արժանի եմ աւելի քան ներողութեան, որովհետեւ իմ սէրս աճեցրել ես դու, Նունէ, քո թովիչ էութեան, քո հազուստի ծալքերի, քո աչքերի զսպած դուրդուրանքի հովանու տակ. նա աճել է քո կողքին, քո շուրջը ու այժմ բաղխում է քո դուռը, իր դուռը... Անցեալ շաբաթւայ մեր երկու պատահմամբ հանդիպումների տպաւորութիւնը չէ, որ ինձ ստիպում է այսպիսի ջերմեռանդութեամբ դիմել քեզ... Հաւատացիր, որ մեր անջատման երկու տարիների ընթացքում դու ոչ մի բոպէ իմ մտքիցս չես անցել... Հաւատացիր. երգւում եմ այն արցունք-

ներով, որ ես թափել եմ առաւօտները, յանկարծակի արթնանալով, ինձ արած երազային այցելութիւններից յետոյ, որովհետեւ, Նունէ, դու այդ այցելութիւնների ժամանակ միշտ տխուր, միշտ տանջւած էիր ներկայանում ինձ. դալկացած, թշւառ, հերարձակ, արտասուքը փոս ընկած աչքերիդ, գլուխդ խժուժով ծածկւած, ասես վուշ մանած, իմ պատանս նիւթելու համար... Հաւատացիր. երգւում եմ այն ըստի գիշերներով. որ ես, վաստակած օրւայ աշխատանքից, քնելուց առաջ, ուղղել եմ վերեւ, խաւարի մէջ, շատ հեռու սաւառնած քո սուրբին...

Իսկ այն գիւտը, որ մենք այդպիսի բոպէներից մէկին արել ենք միասին, աչքը աչքի մէջ, սիրախօսելով—դու վերելից, ես ներքեկց. այն, որ տարածութիւնը և ժամանակը կրճատողները ոչ թէ շոգին ու էլեքտրականութիւնն են, այլ... սէրը. կեցցէ սէրը...

Ու հիւ գիտէ, Նունէ. թէ գետինը սարսեցնող սիրոյ երկունքը դեռ ևս ի՞նչ գիւտերով պիտի լուծւի...

Արդ, մեր վերջին երկու հանգիպում-

ները լիքը բաժակն ընկած կաթիլներ էին. գետը ուռել է, ասիները նեղ են. ճանապարհն հոսանքին... կեցցէ սէրը...

Ընդունիր ինձ քո «ազատած» թևի տակ, Նոնէ. տուր ձեռքդ յանուն մեր սէրի...

Քեզ սիրող քո Արշակ:

II

Տիկին Մունէ Պատուակա-
նեանի նամակը Արշակ Մա-
րալեանին.

Իմ անգին բարեկամ Արշակ,

Հարածներից ամենասաստիկը, որ կեանքը երբ և իցէ հասցրել է ինձ, ես համարում եմ մեր անջատումը ոչ միայն նրա համար, որ ես զրկւեցի իմ ամենաթանկագին բարեկամիցս, այլ գլխաւորապէս այն ծանր զոհաբերութեան պատճառով, որ քեզ պէս մի ընկեր յանձն էր առնում ինձ համար ինքնաբարբար, ամուսնուս անտեղի կշտամբանքներից և պարզապէս մարդոց բամբասանքներից ինձ ազատելու նպատակով: Արգ, ես ոչ միայն գիտէի քո ծգտումը դէպի ինձ, այլ և ականատես եղայ այն գերմարդկային ոյժին, որ դու գործ էիր դնում, անջատ-

ման մնաց բարեկց յետոյ, մեր բնակարանից հեռանալիւ, քայլերդ հաստատ դնելու համար. իմ սիրտս կտոր-կտոր էր լինում, ու պատուհանից լրացնելով քո շարժումները, ես Աստուծոյ, Աստուծոյ էի անում, որ դու վերադառնաս. սուտ չի լինի, եթէ ասեմ, որ այդ ընկերին ես ինձ արարածներից երջանկագոյնը կհամարէի, եթէ, քեզ հետ պատահած մի փորձանքի պատճառով ստիպւած, դուրս գայի մի օգնութիւն հասցնելու, քեզ մեր բնակարանը բերելու...

Վայրկենական թուլութիւնը սակայն պիտի նահանջէր հասարակաց բարիքի հրամայողական պահանջի, ամուսինների անբաժանութեան գիտակցութեան առաջ. արդ, զոհերը պարտաւորութեան մոլորակներն են...

Ու այժմ երեսո պարզ կարող եմ ասել, թէ ես իմ տանջանքների դէմ ինձ վարձատրւած եմ համարում նրանով, որ կրիտիքական այն ընկերին ես քո յետևից չըվազեցի, Արշակ...

Բայց անա դէպքը, Նւարդիս հիւանդութիւնը, մեղ նորից կանգնեցնում է դէմ առ դէմ շնորհիւ այն պատահականութեան, որ դու Բ-ում, հեռագրական ապ-պարատիդ մօտ նստած, լսեցիր, թէ ինչպէս

գործիքը չընկճըխկացնում է իմ անուէնը
և ապա այն գոյժը Թիֆլիսից, թէ նը-
ւարդս հիւանդ է... Քեզ յայտնի եղաւ և
իմ պատասխանիս բովանդակութիւնը, թէ
«այսօր մեկնում եմ»...

Ու մենք պատահեցինք Բ-ում երկու
անգամ. մի անգամ, Թիֆլիս դնալուս ժա-
մանակ, միւս անգամ, այնտեղից վերա-
դառնալիս...

Դու այնքան բարի եղար, որ երկու
անգամ ևս, տեսնելով իմ մենակութիւնը,
առաջարկեցիր ուղեկցել ինձ Բ-ից մինչև
երկաթուղու Մ. կայարանը և, հինգ օրից
յետոյ, այստեղից վերադառնալիս, մինչև
Բ... Ու այդ երկու, չորսական ժամ ճա-
նապարհորդութիւնները կառքով ինձ յի-
շեցրին կեանքիս այն ամենաքաղցր լո-
պէսները, որ մենք անցկացրինք ջրաղացի
մօտ պատահած դէպքից յետոյ, դուքս
սլոժած քարափի հովանու տակ. երբ մենք,
ինչպէս դու ես ասում նամակումդ, իրար
կալած, միմեանց չէինք պատկանում...

Բայց մենք միշտ պատկանել ենք ի-
րար, Արշակ, հոգով, ձգտումներով, տա-

րածութեան մէջ աճեցրած սէրով... Ո՛հ,
չեմ հաւատում, թէ ես աւելի երջանիկ
կըլինէի, եթէ մենք, փոխանակ կառքի
երկու հակառակ կողմերում, մի թիզ ի-
րարից հեռու նստելու, կրճատէինք այդ
տարածութիւնը... Եթէ, օրինակ, Մ. կա-
յարանից վերադառնալիս, թաւախիտ կիր-
ճը մտնելու ժամին, դու ինձ սղմէիր քո
բազուկների մէջ... Դու ոչ միայն այդ
չարիք, այլ և, ակամայ ցնցումդ զսպելու
համար, աւելի հուպ եկար կառքի եզրին,
ոչնչացար... Ինչ լաւ մարդ ես, Արշակ:
Դու կանխեցիր զգուշին, երբ ես արդէն
շմամ էի քո սէրից. յարգանք այն ար-
զանդին, որ քեզ հասցրել է. յարգանք քո
հարազատ մօրը: Ու քո այդ «մաքրու-
թիւնը», քո այդ պատկառանքը «մօր»
սոսալ աւելի բիրտդացրեց իմ սէրը դէպի
քեզ, և քո մայրը, քեզ ծնողը, գտաւ իր,
եթէ կարելի է այսպէս ասել, արքայու-
թիւնը... իմ սրտում... Կեցցէ մայրը...

Ես վերադարձայ Ա. բոլորովին վերա-
ծնւած, մկրտւած քո աւագանի մէջ ու
սկսեցի շտապ-շտապ ամենեւին Թիֆլիս
հաստատուելուս պատրաստութիւնները
տեսնել: Քեզ հետ նորից առանց հետե-
ւանքի տեսակցելու, նորից եթերային սի-
րոյ աւագանում ըրկղմելու հնարաւորու-

Թիւնը իմ ուժերս տասնապատկել էին ու գործն առաջ էր ընթանում, ասես մոգական գաւազանի հարւածով...

Խնայիր ինձ...

Դու ասում ես. թէ սէրի երկունքից ուրիշ գիւտեր ես սպասում. մէկն էլ ես եմ արել, Արշակ, կառքում, քեզանից «անըաժան մէկ թիզ հեռու նստած»... Գուշակիր մտքինս և լաւ մտածիր քո փոքրիկ, դէպի կառքի եզրը, փախուստի մասին, կիրճում... Ինչ է ասում քեզ քո բնազդական թափը, տարածութիւնը հեռացնելու քո ձգտումը. այն, որ մայրը սուրբ է... Կիցցէ մայրը...

Ու դու պիտի հասկանաս, որ—աբիաջիր, Արշակ—իմ թեւ ազատ չէ, այնտեղ բազմած է Նւարդը...

Յանուն մեր եթերային սէրի, Արշակ, չըվիճես, որովհետեւ իմ վճիռն անդառնալի է. այն, որ մենք մարմնապէս իրար համար մեռած ենք...

Մենք իրար պիտի սիրէինք տարածութեան մէջ և այն ժամանակ, եթէ Նւարդը մէջտեղը չլինէր, որովհետեւ, ազնիւ բարեկամ, որովհետեւ կինը ընդմնադ-

ըութեան «բաժակը» պիտի խմէ մի անգամ, մէկի հետ...

Արիացիր, սիրելի բարեկամ...

Քեզ սիրող քո Նունէ...



ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ, ԹԱԼԻԿՈ ԶԱՆ...

— 0 —

Յարութեան նախօրեակի առաւօտին Թալալը պատուհանի առաջ նստած ասղանկարում էր մետաքսէ մի «քող»։ Գործը ոսկեկար մի սկիհ էր, որի բաժակը շրջապատել էին սպիտակ քերովբէներ, պար բռնած... Երկնագոյն ֆօնի չորս անկիւնում դրախտային չորս թևաւոր կը տուցնէր խաղողի ողկոյզները թոցնում էին դէպի կենտրոնի արեգակը, որ՝ բոբբոքելով սկիհի յետևում, փայլեցնում էր բոցավառ ճառագայթներ։

Թալալն աշխատում էր «քողն» աւարտել, որպէսզի, իր խոստման համաձայն, յանձնէ այն եկեղեցու աւագին, երեկոյեան պատարագից առաջ...

Ու յաջողած «գործի» համարեա վերջացնելու այդ բոլէին նա առաջուց վայելում էր այն գովասանքների քաղցրութիւնը, որ պիտի լսէր այսօր եկեղեցում, երբ ժամարարը, պատարագն աւարտած, կանանց դասը գալով, կըտար Թալալին մեծ նշխարը, գովելով միւս կանանց ներկայութեամբ նրա բարեպաշտութիւնը, բայց մանաւանդ շնորհալիութիւնը...

Միայն այդ չէր պատճառը, որ Թալալի մատնեբը, չընայելով իր յիսուն և հինգ տարուն, շարժում էին ասեղը երիտասարդական ջերմեանդ կայտառութեամբ. նրա ունայնասիրութիւնը շոյում էր և այն հանգամանքը, որ երկու ամսայ իր աշխատանքի արդիւնքը մի անգամ ևս գալիս էր ապացուցանելու կնոջ ճաշակի գերազանց առաւելութիւնը տըղամարդին համեմատութեամբ...

Այդ բանը զգում էր և ինքը Բեժանը, Թալալի ամուսինը, որ, հակառակ իր սովորութեան, լուռ ակնածութեամբ կուշ էր եկել իր կնոջ հէնց ոտքերի մօտ, մի ցածրիկ նստարանի վերայ, առանց համարձակելու մի նկատողութիւն անել... Ելին խօսել.—գործը այն էր ցոյց տալիս, որ շնորհալի վարպետի մատնեբը ասեղնակար դրախտային թռչունների բերաննե-

բում բռնած կեռասների փունջը կարող են այնպէս սուեբաւորել, որ կարմիր խաղողի ողկոյդ ստացւի, կեռասների փոխանակ...

Ամբողջ երկու ամիս, մոռացած իր «մրսելու» հիւանդութիւնը, այս Բեժան Իոայիչը քամեց խեղճ Թալալի ուղեղը...

— «Ծտերի» բերաններինը խաղող չէ, կեռաս է. խաղողը պէտք է բաց ոսկեգոյն թելով կարել...

Ու այսպէս անվերջ, թէ ճաշին, թէ քնելիս և թէ արթնանալով...

— Թալիկօ, ողորմի հօրդ, մի լաւ մը տածիր այսօր «գրա» մասին...

Կամ թէ չէ, անուղղակի կերպով.

— Թալիկօ ջան, մեր այգու այս տարւայ խաղողը, «սպիտակ» խաղողը...

Խաղող և խաղող...

Վէճը շատ անգամ սուր կերպարանք էր ստանում. ու այն ժամանակ Բեժանը, կնոջ կամակորութիւնը պատժելու համար, հարցից շեղւելով, սկսում էր քննադատութեան ենթարկել այն ամենը, ինչ որ ժամին ու սրա գործերին էր վերաբերում,

առանձնապէս յանդիմանելով կնոջը, որ վերջին երեք—չորս տարւայ ընթացքում առանձին քնքշութիւն էր ցոյց տալիս դէպի տէրտէրները, բայց մանաւանդ դէպի այն «ուսում առած ակնոցաւորը»... Հերիք, վերջապէս. ով է տեսել, որ մի կին, «պատւաւոր ընտանիքի մի հարս» իր հոգատարութիւնը դէպի սևազգեստները հասցնի այն աստիճանի, որ ժամարարի սպիտակ գուլպաների մատակարարը դառնայ ու դրա համար ողջ տարին պատուհանի առաջ նստած աչքերի լոյսը մաշէ... Հերիք, վերջապէս.—մեծ բան է, թէ այն «ակնոցաւորը» ամեն անգամ, պատարագ անելիս, թարմ շապիկ չունենայ... Օ՛, մին էլ թո՛ղ ժամկոչ Սօլօմանը, կէսաղիւսաչափ քիթը ցցած, քօշերը քրթքրթացնելով ժամարարի շապիկը լւանալու բերէ...

—Օ՛հ Բեթան, ճհ Բեթան, սիրտս կերար, տօ... Զըյոգնեցիք քա... Տղամարդ ես, վեր կաց մի գործի գնա՛, բնգար կայ, մարդիկ կան,—«կծում էր» իր կողմից թալալը, ակնարկելով մարդու անպէտքութիւնը...

—Ասում եմ է՛... Մեղայ Բեդ...—սպառնալից հայեացքով բտրկանում էր Բեթանը ու խոով հեռանում, նստում ան-

կիւնում դրած հին բազկաթոռի վրայ, այնտեղից սրտապատառ նայելով, թէ ինչպէս իր կողակիցը, աչքերն արտասուքով լիքը. վերցնում է քարգեհանը ու մի կողմը դնում...

Գործը, «անհամութիւններից» յետոյ, ջգրու կատարւում էր գիշերները, երբ, Բեթանին քնած կարծելով, թալալը տեղերից վեր էր կենում, ճրագը վառում ու ասղանկարեւն սկսում... Այսպիսի դէպքերում Բեթանը, ի հարկ է, միայն քնել էր ձևացնում, վերմակի տակից դիտելով թալալի բոլոր շարժողութիւնները... Երբորդ օրը, համբերութիւնից դուրս, նա կէս գիշերին վեր էր կենում, «չափուօլը» հագնում և սենեակում առաջ ու յետ գնում, երբեմն էլ, անկիւնի բազկաթոռի վրայ նստած, ծնկները տրորում, ուղեհալով թալալին հասկացնել, թէ «մրսելու» հիւանդութիւնն սկսում է... Թալալը չհասկացող էր ձևանում...

Բեթանը, չնայելով «խաղացած» այս անտարբերութեանը, հաշտութեան ուղին թողնել այլևս չէր կարողանում...

—Թալիկօ, «մրսում եմ», մի փոքր այն «վիշնեօւկայից»...

Եւ ապա՛ «վիշնեօւկան» կուլ դցած ու քիթը կարմրեցրած.

— Մէկն էլ դու, մէկն էլ դու, Թալիկո ջան... «Բեժանի» կենացը...

Միւս օրւանից գործը նորից շարունակուեց էր ցերեկները...

Ահա, թէ ինչ «ծանր» պայմաններում էր ասղանկարում «քողը»...

Ահա, Թալալի «մեծասրտութեան» պատճառը, երեխայ տղամարդի առաջ...

Ահա, թէ ինչու Բեժան Իսայիչը, երեսը սև, կուշ էր եկել ցածրիկ նստարանի վրայ, հէնց Թալալի ոտքերի մօտ...

Ու երբ սա, «քողը» աստուած ու աւելնորդ թելը քաշած, պատրաստուեց էր ծախելու այն, Բեժան Իսայիչը, աչքերն արտասուքով լիքը, բռնեց նրա ձեռքը և համբուրեց.

— Մատներդ ուտեմ, Թալիկո ջան...

Ու ապա, լսելով եկեղեցու զանգերի ձայնը.

— Ես մեղմ, Թալիկո ջան... Քրիստոս յարեմ, Թալիկո ջան...



ՀՀ Ազգային գրադարան



NL0375046

58437

